Ազգ
Azg
armenian daily
10 ԱՊՐԻԼ 2002 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 66 (2511)

# Կիպրոսն էլ է Իսրայելին մեղադրում ցեղասպանության մեջ

Թուրքիայից բացի, Կիպրոսն էլ է մեղադրել Իսրայելին պաղեստինցիների հանդեպ «ցեղասպանություն» իրագործելու մեջ: Կիպրոսի խորհրդարանը, համաձայն «Ասոշիեյթեդ պրեսի» Նիկոսիայից ստված հաղորդագրության, միաձայն քվեարկել է հօգուտ այն բանաձեւի, որն «անվերապահորեն եւ հստակորեն դատապարտում է Իսրայելի գործողություններն ու Արիել Շարոնի կառավարության գործադրած ցեղասպանությունը պաղեստինյան ժողովրդի դեմ, որը միայն ատելությունն է հավերժացնում՝ սպանելով տարածաշրջանում խաղաղություն հաստատելու ամեն մի հեռանկար»:

Բանաձեւը կոչ է անում Իսրայելի կառավարությանը «անհապաղ հետ քաշել իր զորքերը պաղեստինյան տարածքներից» եւ վերջ դնել «պաղեստինյան իշխանությունների նախագահ Յասեր Արաֆաթի սադրիչ պաշարմանը, որը անտրամաբանական լինելուց բացի, խոչընդոտում է երկխոսության եւ ողբերգական փակուղուց դուրս գալու որեւէ հեռանկար»:

# Թել Ավիվը չի ճանաչի Հայոց ցեղասպանությունը

*Եթե անգամ Թուրքիայի վարչապետը Իսրայելին մեղադրի պաղեստինցիների «ցեղասպանություն» իրականացնելու մեջ*

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Ապրիլի 8-ին «Արմինֆո» գործակալությունը տարածեց հաղորդագրություն, համաձայն որի Թել Ավիվը պատրաստ է ճանաչելու Հայոց ցեղասպանությունն ի պատասխան Անկարայի կողմից հայտարարությունների: Իրոք, Իսրայելի գործողությունները Պաղեստինում Թուրքիայի վարչապետ Բյուլենթ Էջեւիթի կողմից «ցեղասպանություն» որակելն անհանգստություն է պատճառել ԱՄՆ հրեական համայնքին: Բայց ոչ ավելին: Թե ինչ աղբյուրների վրա հենվելով է «Արմինֆոն» եզրակացության եկել, թե Թել Ավիվը պատրաստ է ճանաչելու Հայոց ցեղասպանությունը՝ դժվարանում ենք ասել:

«Ջերուսալեմ փոստը» ապրիլի 8-ի համարում գրում է, որ Թուրքիայի վարչապետ Բ. Էջեւիթի արտահայտությունները, թե Իսրայելը պաղեստինցիների «ցեղասպանություն» է իրականացնում, լուրջ ճգնաժամ է առաջացրել ռազմավարական դաշնակիցների միջեւ: Հինգշաբթի օրը Էջեւիթն իր կուսակիցներին ասել է, որ ոչ միայն Արաֆաթը, այլեւ ողջ պաղեստինցի ժողովուրդը քայլ առ քայլ ոչնչացվում է աշխարհի աչքի առջեւ: Իսրայելն Անկարայից բացատրություն պահանջեց՝ զգուշացնելով, որ Էջեւիթի հայտարարությունները կարող են ազդել երկու երկրների հարաբերությունների վրա:

Տես ➧ էջ 2

**ՃԵՊԱԶՐՈՒՅՑ**

# Ձեզ ճնշելու որեւէ փորձ եղե՞լ է

*Լրագրողներին հարցրեց նախագահը*

***Երեկ «Արագած» ընկերությունում՝ լրագրողների հետ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի հանդիպման ժամանակ հետեւյալ երկխոսությունը տեղի ունեցավ Հայաստանում խոսքի ազատության վիճակի վերաբերյալ.***

– ԱՄՆ-ի դեսպանատունը մտահոգություն հայտնեց խոսքի եւ մամուլի ազատության սահմանափակման կապակցությամբ՝ կապելով դա Նախընտրական տարվա հետ:

**– Դուք ո՞ր լրատվամիջոցն եք ներկայացնում:**

– «Ազատություն» ռադիոկայանը:

**– Որեւէ ճնշում, ճնշման որեւէ փորձ երբեւէ զգացե՞լ եք:**

– Խոսքը դեսպանատան հայտարարության մասին է:

**– Դեսպանատունը շատ բան կարող է հայտարարել: Ես ձեզ որպես լրագրողի հարցնում եմ, դուք կամ ներկաներից որեւէ մեկը որեւէ ճնշում զգացե՞լ եք առնվազն վերջին 3–4 տարիներին: Չեմ կարծում, թե ճիշտ է մեկ մասնավոր հարցը ընդհանրացնելը եւ Հայաստանում խոսքի ազատության հետ կապելը:**

Ինքիշխանս, հանրահավաքի ժամանակ երեք պահանջ կար Նախագահին ուղղված, բայց ամենից հետաքրքրականն ու զավեշտայինն այն էր, որ դրանցից ոչ մեկը Նախագահի լիազորությունների հետ կապ չուներ:

Ա. Ա.

**ՀԱՄԱՌՈՏ**

# Մայիսին Երեւանում կանցկացվի հայ-ռուսական տնտեսական հանձնաժողովի 5-րդ նիստը

ԵՐԵՎԱՆ, 9 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ՀՀ պաշտպանության նախարար, հայ-ռուսական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Սերժ Սարգսյանը ապրիլի 9-ին Մոսկվայում հանդիպում է ունեցել ՌԴ արդյունաբերության, գիտության եւ տեխնոլոգիաների նախարար, հայ-ռուսական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի ռուսաստանյան կողմից համանախագահ Իլյա Կլեբանովի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են հայ-ռուսական տնտեսական համագործակցության խնդիրներն ու հեռանկարները, ինչպես նաեւ համատեղ ձեռնարկությունների ստեղծման հետ կապված մի շարք հարցեր: Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել հայ-ռուսական տնտեսական միջկառավարական հանձնաժողովի 5-րդ նիստը մայիսի երկրորդ կեսին Երեւանում անցկացնելու վերաբերյալ:

## Վանո Սիրադեղյանը՝ «ՀՀ-ում մշտապես բնակվող»

ԵՐԵՎԱՆ, 9 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ապրիլի 9-ին Կենտրոն եւ Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը բավարարել է ՀՀՇ վարչության հայցն ընդդեմ ՀՀ ՆԳՆ անձնագրերի եւ վիզաների վարչության: Հայցվոր կողմը, ինչպես հայտնում են ՀՀՇ լրատվական ծառայությունից, դատարանից պահանջում էր պարտադրել համապատասխան մարմնին տալ տեղեկանք, որ Վանո Սիրադեղյանը վերջին 5 տարում հանդիսանում է ՀՀ-ում մշտապես բնակվող: «Այլեւս որեւէ իրավական արգելք չկա, որ Վանո Սիրադեղյանը գրանցվի ՀՀ ԱԺ պատգամավորության թեկնածու», նշված է կուսակցության լրատվական ծառայության հաղորդագրությունում: Վանո Սիրադեղյանի թեկնածությունն առաջադրված է Տավուշի մարզի թիվ 75 ընտրատարածքում անցկացվելիք ԱԺ պատգամավորի լրացուցիչ ընտրություններում:

# ՀԱՊ. Երեւանյան հանդիպմանը հատուկ ուշադրություն ռազմական հարցերին

ԵՐԵՎԱՆ, 9 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ապրիլի 9-ին Երեւանում կայացած Հավաքական անվտանգության պայմանագրի (ՀԱՊ) մասնակից պետությունների պաշտպանության եւ արտաքին գործերի փոխնախարարների խորհրդակցական հանդիպումը նվիրված էր ՀԱՊ կատարման ընթացքին: Ինչպես լրագրողներին հայտնեց Հավաքական անվտանգության խորհրդի գլխավոր քարտուղար Վալերի Նիկոլայենկոն, հատուկ ուշադրություն է հատկացվել Պայմանագրի ռազմական բաղկացուցիչի հետ կապված հարցերին, որը հատկապես կարեւորվում է նոր աշխարհաքաղաքական իրավիճակի պայմաններում: Մասնավորապես, քննարկվել է ՀԱՊ հատուկ շտաբի ստեղծման հարցը, որը կկոորդինացնի Պայմանագրի շրջանակներում երեք ուղղությունները՝ արեւելաեվրոպականը՝ Ռուսաստանի եւ Բելառուսի ԶՈՒ բազայի վրա, կովկասյանը՝ Ռուսաստանի եւ Հայաստանի, եւ կենտրոնասիականը՝ Ղազախստանի, Ղրղզստանի եւ Տաջիկստանի:



Տես ➧ էջ 2

# Քոլին Փաուելը հինգշաբթի կհասնի Իսրայել եւ կհանդիպի նաեւ Արաֆաթին

Երեկ Եգիպտոսում Նախագահ Հոսնի Մուբարաքի հետ հանդիպելուց հետո Մ. Նահանգների պետքարտուղար Քոլին Փաուելը մամլո ասուլիսում հայտարարեց, թե հինգշաբթի օրվա երկրորդ կեսին կժամանի Իսրայել եւ հավանաբար նույն օրը Ռամալլայում կհանդիպի նաեւ պաղեստինցիների առաջնորդ Յասեր Արաֆաթին: Ավելի ուշ Իսրայելի արտգործնախարարության մամլո խոսնակը հաստատեց տեղեկությունը եւ ավելացրեց, որ իր կառավարությունը չի առարկում Փաուել-Արաֆաթ հանդիպմանը: Նույն ասուլիսում Փաուելն ասաց, որ իր առաքելության նպատակն է տարածաշրջանում հասնել «հրադադարից անդին քաղաքական կարգավորման»:

Այնինչ, հարկ է նշել, որ այժմ հրադադարի հասնելն է գլխավոր խնդիրը, քանի որ Իսրայելը, հակառակ պաղեստինյան Թուլքարամ եւ Կալկիլիա քաղաքներից զորքերը հեռացնելու փաստին, երեկ առավել եւս մխրճվեց Ջենին եւ Նաբլուս քաղաքների գրավման գործողություններում, մեծ կորուստների գնով: Երեկ Ջենինի մոտ գտնվող գաղթակայանում Իսրայելը կորցրեց 13 զինվոր եւ 9 ուրիշներ վիրավորվեցին: Հրեաների ասելով, այդ կորուստը հետեւանք էր նահանջող պաղեստինցիների կողմից տներից մեկում նախապես լարված ականային ծուղակի:

Ինչ վերաբերում է Փաուելի Եգիպտոս այցին, նախագահ Մուբարաքի հետ հանդիպման պահին Կահիրեի համալսարանների ուսանողությունը հակաամերիկյան հզոր ցույց էր անցկացնում մայրաքաղաքի փողոցներում:

Մի այլ ցույց, այս անգամ Հորդանանի մայրաքաղաք Ամմանում, երեկ գլխավորում էր Ռանիա թագուհին, որը ծագումով պաղեստինցի է: Ցույցի նպատակն էր համաշխարհային հանրության ուշադրությունը սեւեռել պաղեստինցիների մարդկային իրավունքների ոտնահարման փաստի վրա:

**ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

# Լիազոր ներկայացուցիչները կաշխատեն համանախագահների հետ

ԵՐԵՎԱՆ, 9 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների լիազոր ներկայացուցիչների մասնակցությամբ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների առաջին հանդիպումը ծրագրվում է անցկացնել մայիսի կեսին: Ինչպես լրագրողներին հայտնեց Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալ Վյաչեսլավ Տրուբնիկովը, հանդիպումը կկայանա արեւելաեվրոպական պետություններից մեկի մայրաքաղաքում, ամենայն հավանականությամբ Պրահայում:



Ըստ Տրուբնիկովի, ղարաբաղյան կարգավորման բանակցությունների ֆորմատի ընդլայնման ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների գաղափարն ուղղված է բանակցային գործընթացի շարունակականության ապահովմանը: «Մենք վաղուց արդեն երկու նախագահների ուղիղ երկխոսություն չենք տեսնում, այդ պատճառով համանախագահները հանդես եկան նախագահների լիազոր ներկայացուցիչների նշանակման առաջարկով, որոնք կաշխատեն Մինսկի խմբի երեք համանախագահների հետ»,– նշեց Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարի տեղակալը:

Ըստ Տրուբնիկովի, կոնկրետ հարցերը, որոնք քննարկվելու են հանդիպմանը, դեռեւս գտնվում են մշակման փուլում: Ինչ վերաբերում է ղարաբաղյան խնդրի կարգավորման բանաձեւերի մշակմանը, ապա նման կարգի որոշումները, ընդգծեց նա, «մնում են երկու նախագահների՝ Քոչարյանի եւ Ալիեւի ուսերին»:

Ի պատասխան այն հարցի, թե ղարաբաղյան կարգավորման մեջ ուղղում չե՞ն մտցնի արդյոք տարածաշրջանի աշխարհաքաղաքական նոր պայմանները, մասնավորապես ԱՄՆ-ի ռազմական ներկայությունը, Տրուբնիկովը նշեց, որ ըստ ամերիկյան կողմի հավաստիացումների, տարածաշրջանում մշտական ռազմական ներկայություն չի նախատեսվում:

# Սկանվորդ


1

1

Գնացքի «միավոր»

Պարա-բատրոն

Դուրյանը, բայց ոչ Պետրոսը

Պերմի մարզի տարածքը

3


2

30 արծաթ

Խորովածի «բոյով կոլեգան»

Զսպանակի «տարր»

Մայր, մարե, ...

«Մեռած հոգիներ»

Նապոլեոնյան մարշալ

Դժոխք Արմենակը

4

Հոմանիշ է ամբարին

Պավլիշվիլու երկրացի կոլեգան

Հավիտենական հանգրվանություն

Մարզական ծղոտե գորգ

Բնակավայր

«Ձիպի շարժիչով» ռուս. մեքենա

«Հայաստան» երգ. Լեւոնյան

«ԱՆ-վրդով» ռուղուկածայն

5

Կարդինալ Ռիշելյեի անունը

Լիճ Ամասիայում

Նոր տիպի վերանորոգում

Լողացող «տանկ»

Ռիգացու բռշակի միավորը

Պուրակով առանձնատուն

Ցեղ, տոհմ, սերունդ

Վարելիս երգվող երգ

Պախրա

ժե, ինի, ...

Քնած «լարախաղաց»

Ճաշակում

Սրտակից

Անոթ, սրվակ

Վայրկյանի վաթսունապատիկը

Ուստիանի «քաջ» ամուսինը

Ապինայի անունը

Առաստաղից էլ վեր


3

Պոպ-երգչուհի Պոլինա ...

Զատիկ, խաղորդօրինեք

Ռուս կնոջ «կրոնանուն»

Ռեալիստ

Բարմալեյին ատելի շուն

Ամպրոպից առաջ «տիրողը»

Ծիծեռնակի բնի շինանյութ

Հոկտեմբերիկի «ապագան»

Սիրելի ժանր Նար-Դոսի համար

Ֆրանսիացու պորտատան

Երկրագնդի «չոր» հատվածը

Դասախոս

Կինոթատրոնային «դասաժամ»

Դյուսնի «փորիչը»

... Պիկասո

Կշռաչափերի «ռեկորդակիրը»

Մարտին Լյութեր ...

Նուրբ գործվածք

Ծծկերի «բողոքը»

Զգեստների ցուցադրավայր

Կոստյումի երրորդ «անդամը»

Զրաման, փարչ

Գերկարճ, մետրային, ռադիո

Ունքերի «աղեղնաձեւ որակ»

2

Գետի հոսող «մակետ»

Վեգ, ալչու

Իքսը որպես մեծություն

Նեֆրոլոգիա

«Կշռադատող» հույն դիցուհի

Բուսաբանկենսաբան

«Հրազենային» սառցակտոր

Հակաքրիստոս

Ավարառություն

Ճանապարհներից գալարունը

Պլանավորված գործ

Ֆիլմի «ընթացքը»

Գետին բնորոշ ընթացք

Ջերմին համարժեք


4

Խորխորատ

Խուզարկու շան «բռնածը»

Ռուս բառարանագիր Վլադիմիր ...

Երբ չունի Թյորները

Ֆրանսիական երեկոյան թերթ


5

... կեծակի

Թիվ, շաբաթ

Սապատ

«Փնքի տղա»

Կանացի «շալվար»

«Անչափահաս» Միերը

Քար, որի հանքը Արթիկում է

Համբավ, հեղինակություն

Չգիտակցված մղում

